

ՀԻՄՆԱԿԱՆ
ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԹԵՉԵՐՆ ՈՒ
ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ
ԼԱՆՍԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ
ՇՈՒՐՁ



ԻՐԱՉԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ

Մայիսի 8-ին Ազգային ժողովում տեղի ունեցան քննարկումներ [Լանսարոտեի կոնվենցիայի](#) վերաբերյալ, որոնց վրա որոշակի ստվեր գցեց նույն օրը Ազգային ժողովում տեղի ունեցած ծեծկռտուքը: Մայիսի 8-ի լրահոսում թեմային լրատվամիջոցները գլխավորապես անդրադարձել են ԲՀԿ խմբակցության պատգամավորների՝ Գևորգ Պետրոսյանի, Նաիրա Չոհրաբյանի և Արման Աբովյանի ելույթների տեքստերով՝ հիմնականում լուրի ժանրով: Թեմայի վերաբերյալ առյուծի բաժինը ([panorama.am](#), [aravot.am](#), [a1plus.am](#), [factor.am](#), [168.am](#), [tert.am](#), [armeniasputnik.am](#), [armlur.am](#)) զբաղեցնում է Գևորգ Պետրոսյանի ելույթն այն մասին, թե «ինչպես կարելի է «հեքիաթից ու կաթից կտրված երեխաներին սեռական շահագործումից պաշտպանվելու մասին սովորեցնել»:

Լանսարոտեի կոնվենցիայի շուրջ աղմուկն ավելացավ, երբ մայիսի 11-ին խորհրդարանը [վավերացրեց](#) այն. «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը դեմ քվեարկեց, «Լուսավոր Հայաստանը» չէր մասնակցում քվեարկությանը, քանի որ մայիսի 8-ին տեղի ունեցած ծեծկռտուքից հետո բոյկոտում էր ԱԺ նիստերը:

Կոնվենցիան, ընդհանուր առմամբ, հայկական մեդիա տիրույթում մանիպուլյատիվ կերպով ներկայացվեց որպես «սորոսականների կողմից առաջ մղվող» «սեռական դաստիարակություն տարրական դասարաններում», ինչը հակասում է «ազգային արժեքներին»: Ի դեպ, «ազգային արժեքներին հակասող» կոնվենցիայի ամբողջական անվանումն է՝ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա»: Հատկապես շահարկվեցին կոնվենցիայի 2-րդ¹ և 6-րդ² հոդվածները, որոնք ներկայացվեցին ոչ ամբողջական՝ համեմված մանիպուլյատիվ տարրերով:

Ստորև ներկայացնում ենք Լանսարոտեի կոնվենցիայի շուրջ մայիսի 8-17-ն ընկած ժամանակահատվածում առցանց տիրույթում տեղ գտած հիմնական քարոզչական թեզերը, որոնք առաջ էին մղվում կոնվենցիայի մանիպուլյատիվ մեկնաբանության արդյունքում:

¹ **Հոդված 2. Խտրականության արգելման սկզբունքը.** Կողմերի կողմից սույն կոնվենցիայի դրույթների կիրարկումը, մասնավորապես զոհերի իրավունքների պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացումը, երաշխավորվում է առանց որեւէ հիմքով խտրականության, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքներ, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնության պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը, սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը, հաշմանդամությունը կամ այլ կարգավիճակ:

² **Հոդված 6. Երեխաների կրթությունը.** Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ երեխաները տարրական և միջնակարգ կրթության ընթացքում ստանան սեռական շահագործման ու սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների, ինչպես նաև ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկություններ, որոնք հարմարեցված են նրանց զարգացող կարողություններին: Ծնողների հետ համագործակցությամբ տրամադրված այդ տեղեկությունները պետք է անհրաժեշտության դեպքում տրվեն սեռական բնույթի հարցերի վերաբերյալ տեղեկությունների առավել լայն համատեքստում, և պետք է հատուկ ուշադրություն դարձվի վտանգավոր, հատկապես նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում ներառող իրավիճակներին:

ՍԵՐՈՆՆՈՂ ԽԵՂՈՒՄ ԵՆ

Մի շարք լրատվամիջոցներ Լանսարոտեի կոնվենցիայի «խնդրահարույց» դրույթները մեկնաբանելու համար դիմել են փորձագետների օգնությանը՝ հոգեբաններ, սեքսոլոգներ, իրավաբաններ, որոնք ընդհանուր առմամբ պնդել են, թե դպրոցներում «սեռական կրթությունը» կարող է լուրջ հոգեկան շեղումներ առաջացնել երեխաների մոտ:

Այսպես, «Իրավունքի» հետ զրույցում բժիշկ-սեքսոլոգ Նարինե Ներսիսյանը մի կողմից [կշել է](#), որ ինքն «անգամ չգիտի, թե ինչ են դասավանդելու», մյուս կողմից պնդել է, թե «երեխաներն այդ ամենի արդյունքում կարող են ստանալ լուրջ հոգեկան շեղումներ»:

Հոգեբան Կարինե Նալչաջյանը Livenews.am-ի հետ զրույցում [ասել է](#), թե «մենք գտնվում ենք հիբրիդային պատերազմի մեջ», որտեղ «երեխաները թիրախավորվում են», արդյունքում «խեղվում է սերունդը»: «Հիշենք այդ հեղափոխության ժամանակ [2018 թ.] փողոց լցված երեխաներին: Երեխաների թիկունքի ետևում էին մի տեսակ պատսպարվում: Այսինքն երեխաներին օգտագործում են: Հիմա սա շատ ուղիղ թիրախավորված է մեր երեխաների բնականոն զարգացումը, հոգեկան առողջությունը», - հայտարարել է հոգեբանը:

Այս առումով մանիպուլյացիաների մի մեծ բաժին հասնում է փաստաբան Ալեքսանդր Կոչուբանին, որը դարձյալ Livenews.am-ի հետ զրույցում [հայտարարել է](#), թե «դասերի ժամերին մինչև չորս տարեկան երեխաներին պետք է սովորեցնեն ձեռնաշարժություն», իսկ ավելի բարձր տարիքի երեխաներին «արդեն կբացատրեն ինչ է օրգազմը, սեռական հարաբերությունները, սերմնաժայթքումը և նաև կսովորեցնեն հաճույք ստանալ իր մարմնին հպումներից»:

Հատկանշական է, որ նույն փաստաբանը «Հանրային հեռուստաընկերության» եթերում հրավիրված [Հանրային քննարկմանը](#) հրաժարվեց հերքել այդ պնդումը, չնայած որ ակնհայտ անհարմար դրության մեջ էր հայտնվել, հատկապես երբ ի պատասխան իր այդ հարցադրման՝ միանշանակ բացասական պատասխան ստացավ գործադիրի և օրենսդիրի ներկայացուցիչներից: Ի դեպ, քննարկման սկզբում հաղորդավար Պետրոս Ղազարյանը հայտարարեց, որ կոնվենցիային դեմ արտահայտվող մոտ 10 քաղաքական գործիչների հրավեր է ուղարկվել, բայց նրանք հրաժարվել են մասնակցել քննարկմանը:

Ապագային է, հակասում է ավանդական արժեքներին

Նման մեկնաբանությունների ֆոնին քաղաքական գործիչների, սոցցանցերի օգտատերերի և լրատվամիջոցների կողմից հնչեցին հայտարարություններ, որ կոնվենցիան հակասում է «հայ ավանդական արժեքներին»:

Այսպես, «Փաստ» թերթը մայիսի 13-ի համարի «Շարունակվում է ազգային արժեհամակարգի թուլացմանն ուղղված քաղաքականությունը» վերտառությամբ [հոդվածում](#) գրել է, թե «ազգային արժեհամակարգը» տարբեր կողմերից հարվածներ է ստանում, և դա սկսվել է իշխանափոխությունից հետո: «Դրսից ներմուծված և ներսից իրականացվող նախաձեռնությունների արդյունքում քայլեր են ձեռնարկվում փոխելու

հանրության շրջանում ձևավորված պատկերացումները մեր արժեհամակարգի հիմնասյուների՝ բանակի, եկեղեցու և ընտանիքի մասին»,- գրել է թերթը:

«Արմնյուզ» լրատվականը [մանիպուլացրել է](#) կոնվենցիայի երկրորդ հոդվածը, որում նշվում է, թե զոհերի իրավունքների պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացումը երաշխավորվում է առանց որևէ հիմքով (այդ թվում սեռական կողմնորոշման) խտրականության: Հեռուստաալիքի լուրերում նախ անդրադարձ է կատարվել այն մտահոգություններին, որ կոնվենցիայով պատրաստվում են «կրթական ծրագրեր ներմուծել այդ գաղափարները [սեռական կողմնորոշման] և ուսուցանել դրանք դպրոցներում»: Հետո հարց է բարձրացվել. «Արդյո՞ք մենք նորմալ կընդունենք, որ մեր 6 տարեկան երեխան դպրոցից գա տուն ու հարցնի՝ հայրի՛կ, մենք այսօր իմացանք, որ տղայից ու աղջկանից բացի 3-րդ սեռ էլ կա...»:

Panorama.am-ը քաղաքականացրել է թեման՝ նշելով, թե ԱԺ-ն և կառավարությունը «գրողի ծոցն ուղարկելու» ճիշտ ժամանակն է: «Միայն այն փաստը, որ տարրական դասարանի երեխային գենդերային «գիտելիքներ» են սովորեցնելու, բավական պիտի լիներ, որ ողջ ժողովուրդը գրողի ծոցն ուղարկեր այս Ազգային ժողովն ու կառավարությանը... Պետության հիմքերը քանդող դեռ քանի՞ օրենք պիտի ընդունեն այս իշխանությունները, որ հայրենասեր ուժերն ասեն՝ վե՛րջ, բավական է ապականեք Հայրենիքը»,- [գրել է](#) կայքը:

Թեմային այս քաղաքական համատեքստում անդրադարձել են Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչները, որոնց իշխանության օրոք էր ստորագրվել կոնվենցիան: «Այսօր, արդեն Նիկոլի թիմի ջանքերով, Ազգային ժողովը վավերացնում է Լանսարոտի կոնվենցիան, որը դեմ է մեր ազգային ու ավանդական արժեքներին: «Իմ քայլի» այս քայլը վկայությունն է նրանց ապագային քաղաքականության: Վեհափառի ու եկեղեցու վրա հոխորտացող, Արցախի հերոսներին դավադիրներ համարող ու ԱԺ-ն տրանսգենդերների քարոզի հարթակ դարձրած ապագային ռեժիմը հիմա էլ թիրախավորում է մեր երեխաների հոգեսեռական առողջությունը: Հաջորդն ի՞նչն էք պլանավորել վավերացնել, Ստամբուլյան կոնվենցիա՞ն»,- [գրել է](#) ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

Ստամբուլյանի փուլայինը

Լանսարոտի կոնվենցիայով սերմանվող «ապագային արժեքների» ներմուծման համատեքստում ոմանք հիշել են ամիսներ առաջ կրկին մեծ աղմուկ բարձրացրած Ստամբուլյան կոնվենցիան, որը նույնպես մեկնաբանվում էր որպես «ապագային» և «ոչ հայեցի»:

Այսպես, որոշ լրատվամիջոցներ ([panorama.am](#), [yerkir.am](#), [ankakh.com](#), [slaq.am](#)) տարածել են մայիսի 11-ին ԱԺ-ի դիմաց բողոքի ակցիա իրականացնող «Կամք» նախաձեռնության [հայտարարությունը](#), որում մի շարք զուգահեռներ են տարվում Ստամբուլյան կոնվենցիայի իրենց ընկալումների հետ: «Մեր համոզմամբ՝ այս կոնվենցիա-այի ընդունման նպատակը պարզ է և նույնն է ինչ Ստամբուլյան կոնվենցիայի դեպքում էր, այն է՝ կոնվենցիայի երկրորդ հոդվածով արգելել միասեռականության տարածման կանխարգելումը մեր երկրում, այն էլ երեխաների շրջապատում»,- ասվում է հայտարարության մեջ:

«Իրավունք» թերթն էլ մայիսի 12-ի համարում լույս տեսած «Պառլամենտարիզմի մահը, կամ ազգային ախոռ» հոդվածում կոնվենցիան անվանել է «օրինականացված մանկապղծություն», որով երեխաներին փոքր տարիքից սովորեցնելու են տարբեր այլասերություններ: «Եվ եթե Արցախի հարցում Նիկոլն անընդհատ ստախոսելով առաջ է տանում կարգավորման փուլային տարբերակը, ապա այս տխրահոջակ փաստաթուղթը Ստամբուլյան կոնվենցիայի փուլային տարբերակն է», - գրել է թերթը:

Էլի սորոսականները. ինչո՞վ է զբաղված ԱԱԾ-ն

Ստամբուլյան կոնվենցիայի հետ համեմատությունների համատեքստում, ինչպես առաջինի դեպքում էր, այս անգամ ևս լրատվամիջոցներում տեսակետներ առաջ քաշվեցին, ըստ որոնց՝ կոնվենցիան միասեռականությունն օրինականացնելու համար է, և դա է պատճառը, որ դրան կողմ են արտահայտվում «սորոսական պատգամավորները» և «ԼԳԲՏ քարոզիչները»: Tert.am-ի հետ զրույցում փաստաբան Ծովինար Կարապետյանն անգամ [հայտարարել է](#), թե կոնվենցիան վավերացրած եվրոպական մի շարք երկրներում կոնվենցիայի ջատագովները «հետագայում բացահայտվել են որպես մանկապիղծներ»: Ֆեյսբուքյան տիրույթում էլ [այնդումներ](#) են հնչել, թե «ԼԳԲՏ-ները հրճվում են», քանի որ «հերթական ազգակործան հաջողությունը գրանցեցին «երեխաների համար մտահոգվածների» ձեռքերով»:

ArmLur.am-ի հետ զրույցում Փաստաբանների պալատի նախագահ Արա Չոհրաբյանը [հայտարարել է](#), թե «կոնվենցիայի վավերացման և կիրառման հարցում լոբբինգ անող հասարակական կազմակերպությունները և անհատները մեծամասամբ հանդիսանում են ԼԳԲՏ անձանց քարոզով աչքի ընկած սուբյեկտները»: «Սա կասկած է առաջացնում, որ կոնվենցիան կարող է ունենալ թաքնված նպատակ», - եզրակացրել է փաստաբանը:

Թեմայի վերաբերյալ «Գործակալներն են քարոզում Լանգարոտի կոնվենցիան, ինչո՞վ է զբաղված ԱԱԾ-ն» խորագրով ծավալուն [հրապարակում](#) է կատարել Yerkir.am կայքը՝ նշելով, թե ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների «սորոսական թևը» «ակտիվ լծված է սույն կոնվենցիան վավերացնելու քարոզին»: Հոդվածում հրապարակված են մի շարք ֆեմինիստական և ԼԳԲՏ համայնքի շահերը ներկայացնող ՀԿ-ների գործունեությունից դրվագներ, որոնց հիման վրա կայքը եզրակացրել է. «Այսպիսով, նույնիսկ այս նախնական փոքր հետազոտությունը ի հայտ բերեց տեղեկությունների այնպիսի քանակություն, որը կարող է թույլատրել ցանկացած բանական մարդու ենթադրել, որ գործ ունենք խիստ կազմակերպված, Թուրքիայի ինչ-ինչ շրջանակների հետ համագործակցային կապեր ունեցող մի ցանցի հետ, որն այլ երկրներում միգուցե կորակեին գործակալական, լրտեսական կազմակերպված միավորում: Սակայն մենք ապրում ենք տարօրինակ Հայաստանում, և այս մարդիկ այժմ ամենատարբեր պաշտոններ են զբաղեցնում և մեծ տեմպերով պատրաստվում են ներթափանցել կրթական պրոցեսների մեջ՝ որչ Չանրապետության ծավալով»:

Newspress.am կայքն էլ [այնու է](#), որ Լանսարոտի և Ստամբուլյան կոնվենցիաներում «կան կետեր, որոնք ուղղակի դեմ են «հայկական մտածողությանն ու արժեհամակարգին»: ««Իմ քայլը» խմբակցության պատգամավորները այն պաշտպանում են այնպես, ինչպես

պաշտպանում են Ստամբուլյան կոնվենցիան, իհարկե՝ առաջամարտիկի դերը ստանձնել է հայտնի սորոսական Մարիա Կարապետյանը»,- ասվում է հոդվածում:

Պատգամավորները թիրախում

Ազգային ժողովում կոնվենցիայի վավերացման քվեարկությունից հետո «Կամք» նախաձեռնությունից Վահագն Չախալյանը [հրապարակել է](#) կողմ քվեարկած պատգամավորների անունները և գրել. «ԱՅՍ պատգամավորները կողմ են քվեարկել մեր երեխաների ապագան կործանող ազգադավ կոնվենցիային»: Մեկ այլ [գրառմամբ](#) էլ Չախալյանը պահանջել է կողմ քվեարկած պատգամավորներից վայր դնել մանդատները, «քանի որ նրանք իրավունք չունեն կոչվելու ժողովրդի ընտրյալներ»:

Պատգամավորներին թիրախավորել է նաև Analitik.am կայքը, որը նույնպես [հրապարակել է](#) կոնվենցիային կողմ քվեարկած պատգամավորների անունները, վերջում տեղադրել կայքի խմբագիր Անի Յովհաննիսյանի նախօրեի [գրառումը](#). «Վաղը քվեարկության ժամանակ պարզ կդառնա, թե ովքեր են ՀՀ Ազգային ժողովում բացահայտ կամ մինչ այդ պահը քողարկված սպասարկում սորոսական գործակալական ցանցի շահերը»:

Ֆեյսբուքյան օգտատեր Չաքար Խոջաբաղյանն էլ կոչով [դիմել է](#) կողմ քվեարկած պատգամավորներին. «Ուրեմն ուշադիր լսեք. Աստված ոչ անի՝ գեթ մեկ դեպք, երբ սորոսական, կամ սեռաշեղված դեմքերից մեկը դպրոց մտնի՝ երեխաներին քողարկված կամ բացահայտ այլանդակություն քարոզելու կամ, օգտվելով ստեղծված օրենսդրական հնարավորություններից, իրենց կեղտոտ ծրագրերն իրականացնելու փորձ անի: [...] Սերունդներով կհիշեցնենք, որ դուք էն մարդիկ էիք, որոնք դուռ բացեցին այդ այլանդակության համար: Հա, հենց էդպես՝ ճակատներիդ կգրվի տրանսգենդերների հովանավոր»: